ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80,
կապի օպերատոր - (37410) 73 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№_____ առ "___"___ 2021թ.

Ձեր №_____ առ "___"___ 2021թ

ԱՁ Հակոբ Սոսյանին
ք. Գյումրի Պ. Սևակի 20 շ. բն. 20

[ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-123/21-01/205 պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ]

Հարգելի պարոն Սոսյան,

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար «բամբակյա գործվածք» ապրանքների (այսուհետ՝ ապրանք) ձեռքբերման նպատակով ս/թ հունիսի 28-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-123/21» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և Հակոբ Սոսյան ԱՁ-ի միջև 2021թ. հուլիսի 20-ին կնքվել է թիվ ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-123/21-01/205 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ 11051040 (տասնմեկ միլիոն հիսունմեկ հազար քառասուն) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր գնով:

Պայմանագրի տեխնիկական բնութագրում՝ հավելված 1.1 հստակ նշված է, որ մատակարարվող գործվածքը պետք է լինի բամբակյա, խտությունը 250±5% գ/մ², բամբակի բաղադրությունը 90%-ից ոչ պակաս, բարձր ջրակլանողականությամբ, **գունավոր մուգ գույների մեջ**, չգունազրկվող, լայնությունը՝ նվազագույնը 150 սմ, **գլանափաթեթային**:

Ինչպես հրավերում, այնպես էլ Պայմանագրով նախատեսված որևէ դրույթ մատակարարվող ապրանքի նմուշը ներկայացնելու վերաբերյալ նախատեսված չէ:

Համաձայն 17.08.2021թ. ԱԿՏ № 08.21-258 Π մուտքային վերահսկողության ակտի Պայմանագրով սահմանված ժամկետում Ձեր կողմից մատակարավել է բամբակյա գործվածք, խտությունը՝ 250±5% գ/մ², քանակը՝ 12588մ² (3076,9կգ): Ապրանքի մուտքային ստուգման արդյունքում հայտնաբերվել և արձանագրվել են, որ բամբակյա գործվածքի 850կգ գլանափաթեթային տեսքով է, իսկ մնացածը պոլիէթիլենային փաթեթավորմամբ, 700կգ մուգ գույնի է (կարմիր, կապույտ), ուստի արձանագրվել են գույնի և փաթեթավորման անհամապատասխանություններ պայմանագրի տեխնիկական բնութագրի պահանջների նկատմամբ:

Պայմանագրի 2.1.4 կետի պահանջներին համապատասխան ս/թ օգոստոսի 3-ին կազմվել է ստացական և մատակարարված ապրանքը ամբողջությամբ հետ է վերադարձվել:

Ապրանքների մատակարարման ժամկետը երկարացնելու Ձեր պահանջը հնարավոր չէ կատարել, քանի որ խախտվել է ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 56-րդ կետի և Պայմանագրի 8.6 կետի պահանջները:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն միակողմանի լուծում է ԱՁ Հակոբ Սոսյանի հետ 2021թ. հուլիսի 20-ին կնքած թիվ ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-123/21-01/205 պայմանագիրը:

Հայտնում ենք, որ չմատակարարված ապրանքի մասով Ձեր կազմակերպության նկատմամբ կկիրառվի նաև պայմանագրի 6-րդ կետով սահմանված տույժերը և տուգանքները, ինչպես նաև ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 45-րդ կետի պահանջները:

Հարգանքով՝

Գլխավոր տնօրեն՝ **Է. Մարտիրոսյան**

Կազմեց՝
ԳԲ առաջատար մասնագետ՝
Ա. Գրիգորյան
Հեռ. 010-28-29-60, 33-08